ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

- նոյեմբերի 2026 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի №399-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 46-րդ կետը, №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 5-րդ կետը և հաշվի առնելով «ՍԱՄԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն թվականի սեպտեմբերի 7-ի և ի լրումն սեպտեմբերի 16-ի, հոկտեմբերի 1-ի, 27-ի և նոյեմբերի 16-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 26-ի ««ՍԱՄԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սարալանջ 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №399-Ա որոշման մեջ և որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածում «մինչև 2027 թվականի նոյեմբերի 27-ը» թվերը և բառերը փոխարինել «մինչև 2026 թվականի նոյեմբերի 25-ը» թվերով և բառերով, «մինչև 2047 թվականի նոյեմբերի 27-ը» թվերը և բառերը՝ «մինչև 2046 թվականի նոյեմբերի 26-ը» թվերով և բառերով, իսկ հավելվածի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 4900 կՎտ է:»:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ամբողջությամբ ազատել 2025 թվականի հոկտեմբերի 29-ի գրությամբ տրամադրված O.AB.100.12CIB.PIED.0.26664.25 բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած երաշխիքային պարտավորությունից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի նոյեմբերի 26-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
- նոյեմբերի 2026թ.